ԵԱՀԿ երևանյան գրասենյակ

Լրատու

No. 2 Դեկտեմբեր 2010

ԵԱՀԿ երևանյան գրասենյակ. 10 տարի ժողովրդավարացման ճանապարհին

2010 թվականը ԵԱՀԿ երևանյան գրասենյակի համար հոբելյանական տարի է, քանզի 10 տարի առաջ էր սկսվել գրասենյակի գործունեությունը: 10 աշխատակից ունեցող երբեմնի փոքր գրասենյակն այսօր ունի 56 աշխատակից, որոնցից յոթը օտարերկրացիներ են: Գրասենյակի լայն մանդատը ընդգրկում է օժանդակություն Հայաստանի կառավարությանը և հասարակությանը՝ ռազմա-քաղաքական, տնտեսական-բնապահպանական և մարդու իրավունքների ու ժողովրդավարացման ոլորտներում ԵԱՀԿ-ի առջև ստանձնած պարտավորությունների իրականացման գործում:

«Գրասենյակի տասնամյա գործունեությանը դժվար է միանշանակ գնահատական տալ. արձանագրվել են ձեռքբերումներ և թերություններ թե' պետության զարգացման գործում, թե' մեր առաքելության աշխատանքում», նշում է գրասենյակի ղեկավար դեսպան Սերգեյ Կապինոսը, «Բայց կարևորն այն է, որ Հայաստանը այժմ նույնը չէ, ինչ որ 10 տարի առաջ: Հավատացած եմ, որ մեր գրասենյակը իր ներդրումն է ունեցել այդ հարցում»:

ԵԱՀԿ երևանյան գրասենյակը Ժողովրդավարական հաստատությունների և մարդու իրավունքների գրասենյակի (ԺՀՄԻԳ) հետ համատեղ աշխատել է բարելավել օրենսդրությունը միջազգային չափանիշներին և ԵԱՀԿ պարտավորություններին համապատասխան: Գրասենյակի աշխատանքի մեկ այլ կարևոր ուղղություն է պետական կառույցների և քաղաքացիական հասարակության մասնագիտական հմտությունների զարգացումը:

Ռազմա-քաղաքական ոլորտում անհրաժեշտ է նշել երկարաժամկետ գործունեությունը՝ միտված ոստիկանության ժողովրդավարական զարգացմանը: Գրասենյակն օգնել է Հայաստանում ներմուծել համայնքային ոստիկանությունը, աշխատում է բարեփոխել ոստիկանության կրթական համակարգը, ինչպես նաև բարելավել ժողովրդավարական հսկողությունը զինված ուժերում:

Տնտեսական ոլորտում գրասենյակը նախաձեռնել է փոքր և միջին ձեռնարկությունների խթանման միջոցառումներ՝ օժանդակելով ընթացակարգերի և պետական աջակցության քաղաքականության զարգացմանը: Այսօր Հայաստանում գործող 15 «Օրհուս» կենտրոնները կարևոր դեր են խաղում հատկապես գյուղական բնակչությանը տեղական բնապահպանական խնդիրների լուծման մեջ ներգրավելու գործում:

Մարդու իրավունքների ոլորտում ԵԱՀԿ երևանյան գրասենյակը աջակցել է ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի ինստիտուտի հիմնադրմանն ու գործունեությանը, խթանել է գենդերային հավասարությունը, խրախուսել է երիտասարդության մասնակցությունը ժողովրդավարական գործընթացներին և նպաստել է մամուլի ազատությանը: Այն համագործակցում է պետական հաստատությունների և քաղաքացիական հասարակության հետ մարդկանց թրաֆիկինգի դեմ պայքարի ուղղությամբ, ինչպես նաև արդյունավետ միգրացիոն ռազմավարության մշակման ու իրականացման հարցում: Քրեական արդարադատության ոլորտում գրասենյակի հիմնական նվաճումներից է Արդարադատության նախարարության և համապատասխան հասարակական կազմակերպությունների հետ համատեղ քրեակատարողական հիմնարկների և ոստիկանության կալանավայրերի դիտորդական հասարակական խմբերի ստեղծումն ու գործունեությունը:

Գրասենյակի 10-ամյակի կապակցությամբ ՀՀ արտաքին գործերի նախարարության հետ միասին հոկտեմբերի 15-ին կազմակերպվեց դասական համերգ Հայաստանի ազգային ֆիլհարմոնիկ նվագախմբի կատարմամբ:

ԵԱՀԿ երևանյան գրասենյակի ղեկավար, դեսպան Սերգեյ Կապինոսը /ձախից/ և ՀՀ արտգործնախարար Էդվարդ Նալբանդյանը /աջից/ 2010թ. հոկտեմբերի 15-ին գրասենյակի 10-ամյակի կապակցությամբ կազմակերպված համերգին: /ԵԱՀԿ/

ԵԱՀԿ Գլխավոր քարտուղարի ոստիկանության հարցերով ավագ խորհրդականն այցելեց Հայաստան

Նոյեմբերի 24 և 25-ին Ոստիկանության հարցերով ԵԱՀԿ-ի նորանշանակ ավագ խորհրդական Կնուտ Դրեյերը այցելեց Հայաստան՝ ծանոթանալու ոստիկանական բարեփոխումների առաջընթացին: Այցի շրջանակներում Դրեյերը հանդիպեց մի շարք բարձրաստիճան պաշտոնյաների հետ՝ քննարկելու ոստիկանության հաշվետվողականությունն ու ժողովրդավարական հսկողությունը, կրթական բարեփոխումների մարտահրավերները, իրավապահ մարմիններում հակակոռուպցիոն գործողությունները, ինչպես նաև համայնքային ոստիկանության ներմուծման շարունակականությունը:

«Առանց արդյունավետ իրավապահ համակարգի և օրենքի գերակայության ու այն ապահովող կառույցների նկատմամբ իրական հարգանքի՝ սոցիալական, քաղաքական և տնտեսական կայունության հավանականությունը բարձր լինել չի կարող: Լավ պատրաստված ոստիկանները ավելի լավ կծառայեն բնակչությանը»,- ասաց Դրեյերը:

ԵԱՀԿ ոստիկանության հարցերով ավագ խորհրդականը նաև այցելեց ԵԱՀԿ ջանքերով Երևանի Արաբկիր համայնքում բացված երկու ոստիկանական հենակետեր, ինչպես նաև Ոստիկանության ուսումնական կենտրոն և ոստիկանության ակադեմիա՝ Հայաստանում ոստիկան

Երևանում կազմակերպվեց ԵԱՀԿ մոդել համաժողով

Նոյեմբերի 5 և 6-ին առաջին անգամ կազմակերպվեց ԵԱՀԿ մոդել համաժողով հանրապետության մակարդակով, Հայաստանի տարբեր մարզերից 64 ուսանողների մասնակցությամբ: Դերախաղային վարժության մասնակիցները քննարկեցին միգրացիայի և թրաֆիկինգի հետ կապված խնդիրներ, կազմեցին հիպոթետիկ պետությունից աշխատանքային միգրանտների անօրինական հոսքը կանխելու գործողությունների ծրագիր: Միջոցառումից առաջ մասնակիցների համար կազմակերպվել են սեմինարներ ԵԱՀԿ կառուցվածքի և թրաֆիկինգի դեմ պայքարի մեխանիզմների մասին, ինչպես նաև դասընթացներ միջազգային հարաբերությունների, հռետորական խոսքի և բանակցային հմտությունների թեմաներով: Ուսանողները հատուկ խումբ բացեցին http://www.facebook.com կայքում՝ մասնակիցների միջև համագործակցությունն ու շփումը շարունակելու համար:

Թափանցիկությունն ու հաշվետվողականությունը Հայաստանի ընտրական օրենսդրության բարեփոխման առանցքում են, ասում են ԵԱՀԿ աջակցությամբ կազմակերպված հանդիպման մասնակիցները

Ընտրական բարեփոխման թեմայով բարձր մակարդակի սիմպոզիում էր կազմակերպվել նոյեմբերի 22 և 23-ին: Քաղաքական կուսակցությունների, կենտրոնական ընտրական հանձնաժողովի, քաղաքացիական հասարակության, պետական այլ կառույցների և միջազգային հանրության ներկայացուցիչները քննարկում ծավալեցին 2012 թվականի խորհրդարանական ընտրություններից առաջ Հայաստանի ընտրական օրենսգրքի բարեփոխման շուրջ:

«Շահագրգիռ բոլոր կողմերի մասնակցությունը ընտրական օրենսգրքի բարեփոխման գործընթացին չափազանց կարևոր է՝ երաշխավորելու հասարակության կողմից նրա ընկալումը և ընտրական գործընթացի նկատմամբ վստահության ձևավորումը»,- ասաց ԵԱՀԿ երևանյան գրասենյակի ղեկավար, դեսպան Սերգեյ Կապինոսը:

Հայաստանի Ազգային Ժողովի նախագահ Հովիկ Աբրահամյանը ընդգծեց մի քանի խնդիրներ, որոնք պետք է իրենց լուծումը գտնեն ընտրական բարեփոխումների արդյունքում, և դրանց թվում է ընտրական գործընթացի նկատմամբ հասարակության վստահության պակասը:

ԵԱՀԿ Ժողովրդավարական հաստատությունների և մարդու իրավունքների գրասենյակի (ԺՀՄԻԳ) ու այլ միջազգային կառույցների փորձագետները ներկայացրեցին ընտրությունների անցկացման, քաղաքական կուսակցությունների ու քարոզարշավի ֆինանսավորման, վարչական ռեսուրսների օգտագործման, ընտրական վեճերի և դրանց դատական լուծման, ինչպես նաև ընտրակեղծիքների կանխարգելման միջազգային փորձի լավագույն օրինակները:

Ակնկալվում է, որ քննարկման արդյունքները կընդգրկվեն Ընտրական օրենսգրքի փոփոխություններում, որոնք պետք է ներկայացվեն Ազգային Ժողով նախքան օրենսգրքի վերջնական ընդունումը, որ նախատեսված է 2011 թվականի սկզբին:

Միջոցառումը կազմակերպվել է ԱՄՆ միջազգային զարգացման գործակալության, ընտրական համակարգերի միջազգային հիմնադրամի, Եվրամիության պատվիրակության, Եվրոպայի Խորհրդի՝ ՀՀ Ազգային Ժողովի ու Կենտրոնական ընտրական հանձնաժողովի հետ համատեղ:

Դեսպան Սերգեյ Կապինոսը /ձախից/, ՀՀ Ազգային Ժողովի նախագահ Հովիկ Աբրահամյանը /մեջտեղում/ և ՀՀ-ում ԱՄՆ դեսպան տկն. Մարի Յովանովիչը /աջից/ սիմպոզիումի բացմանը, 22 նոյեմբերի 2010թ.: /IFES/

Կիբերանվտանգության խթանում

Դեկտեմբերի 8-ին գրասենյակը ԵԱՀԿ ահաբեկչության դեմ պայքարի բաժնի հետ համատեղ կազմակերպեց փորձագիտական քննարկում, որն անդրադարձավ կիբերանվտանգության խնդիրների լայն շրջանակին՝ կենտրոնանալով ահաբեկիչների կողմից համացանցի օգտագործման, կիբեր հանցավորության և այլ հարակից սպառնալիքների վրա: Մասնակիցների թվում էին Ազգային անվտանգության խորհրդի, Ազգային անվտանգության ծառայության, ոստիկանության, Կենտրոնական բանկի և մի քանի նախարարությունների ներկայացուցիչներ: Նրանք քննարկեցին հավանական հարձակումների հետևանքներն ու պատասխան քայլերը, համապատասխան օրենսդրական շրջանակն ու քաղաղ դասերը և միջազգային լավագույն փորձը, հատկապես կարևորագույն ենթակառույցների պաշտպանության գործում: Մի շարք միջազգային և հայ փորձագետներ կիսեցին իրենց փորձը և ընդգծեցին համացանցային ծառայություն մատուցողների և մասնավոր հատվածի այլ օպերատորների հետ համագործակցության կարևորությունը կիբերհանցավորության դեմ պայքարի գործում: Հանդիպման արդյունքում պատրաստվել է առաջարկությունների փաթեթ և դրանց իրագործման համար ստեղծվելու է միջգերատեսչական աշխատանքային խումբ:

ԵԱՀԿ-ն աջակցում է Հայաստանում արդարադատության բարեփոխումներին

Կազմակերպվել են մի շարք սեմինարներ, որոնք ուղղված էին իրագործելու ԺՀՄԻԳ-ի կողմից դատավարությունների դիտարկման հաշվետվության մեջ տեղ գտած առաջարկությունները, որոնք վերաբերում են Երևանում 2008 թվականի մարտի հետընտրական բռնությունից հետո դատավարություններին: Գրասենյակը ԺՀՄԻԳ-ի հետ համատեղ միջազգային փորձագիտական կարծիք տրամադրեց նոր քրեական դատավարության օրենսգրքի հայեցակարգի վերաբերյալ և կազմակերպեց մի շարք աշխատանքային քննարկումներ: ՀՀ արդարադատության նախարարությունը ներկայացրել էր նոր քրեական դատավարության օրենսգրքի հայեցակարգ, որը պատրաստվել էր նախարարի գլխավորած աշխատանքային խմբի կողմից:

ԵԱՀԿ առաջարկությունները կոչ են անում բարելավելու մարդու իրավունքների պաշտպանության երաշխիքները քրեական դատավարությունում և ուժեղացնելու պաշտպանության դերը այդ վարույթներում: Նոր օրենսգիրքը պետք է ներկայացվի խորհրդարանի քննարկմանը 2011-ի մարտին: Գլխավոր դատախազության կողմից հանցավորության վերաբերյալ տվյալների փորձագիտական գնահատականը նպատակ ուներ համակարգելու այս գործընթացը և կանխելու հնարավոր բացթողումները:

ՀԱՄԱՌՈՏ

ԵԱՀԿ գրասենյակը աջակցում է Հայաստանի պետական միգրացիոն հայեցակարգի մշակման գործում

Գիտակցելով Հայաստանի համար միգրացիոն հայեցակարգ ունենալու կարևորությունը՝ գրասենյակն ընտրել է ազգային փորձագետ, որպեսզի աշխատի կառավարության հետ Հայաստանի պետական միգրացիոն հայեցակարգը վերանայելու ուղղությամբ: Հիմնական նպատակն է օգնել պետությանը մշակել գործողությունների բազմամյա ծրագիր՝ միգրացիոն հոսքերը կանխատեսելու և կառավարության հակազդեցության միջոցառումները ապահովելու համար:

ԵԱՀԿ գրասենյակը տրամադրել է փորձագիտական կարծիք հեռարձակման թվայնացման օրենսդրության վերաբերյալ

Սեպտեմբերի 30-ին գրասենյակը կազմակերպեց անալոգային հեռարձակումից թվային հեռարձակմանն անցնելուն նվիրված սեմինար, որի ընթացքում Լատվիայից ժամանած ԵԱՀԿ փորձագետը ներկայացրեց իր երկրի փորձը այդ ոլորտում, խոչընդոտները և դրանցից խուսափելու եղանակները: Մեկ այլ քննարկում տեղի ունեցավ հոկտեմբերի 13-ից 15-ը ՀՀ նախագահի նախաձեռնությամբ ստեղծված ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի ղեկավարած աշխատանքային խմբում, որտեղ ԵԱՀԿ և Եվրոպայի Խորհրդի փորձագետները կրկին անդրադարձան հեռարձակման գործող օրենսդրությունը բարելավելու իրենց առաջարկություններին:

ԵԱՀԿ գրասենյակը նշեց Հանդուրժողականության օրը

Միջնակարգ դպրոցների մոտ 100 աշակերտներ, գիշերօթիկ դպրոցների և Աբովյանի քրեակատարողական հիմնարկի երեխաներ մասնակցեցին մարդու իրավունքների, բարոյագիտության և գեղագիտության, մասնագիտական կողմնորոշման, օպերատորական և ձեռագործության դասընթացների: Մասնակիցների աշխատանքները ցուցադրվեցին նոյեմբերի 16-ի միջոցառման ժամանակ, ինչպես նաև հայտարարվեցին նկարչության ու շարադրությունների մրցույթի հաղթողները: Ծրագիրը, որ իրականացվում էր *«Ապագան քոնն է»* ՀԿ-ի կողմից, միտված էր նպաստելու երեխաների շփմանը, ինտեգրմանը և վերականգնմանը՝ կրթական, սոցիալական, մարդու իրավունքների մասին իրազեկման ու կարողությունների ձևավորման և սոցիալական տարբեր ծագում ունեցող դեռահասների հմտությունների զարգացման միջոցով:

Ռոք համերգ՝ մարդու իրավունքների օրը

Մարդու իրավունքների միջազգային օրը նշելու կապակցությամբ ԵԱՀԿ երևանյան գրասենյակի աջակցությամբ դեկտեմբերի 10-ին կազմակերպված ռոք համերգի և մարդու իրավունքների թեմայով ցուցահանդեսի կարգախոսն էր *«Մի՛ լռիր. ասա ո՛չ խտրականությանը»* : Միջոցառումը, որ կազմակերպվել էր ՄԱԿ-ի Հանրային տեղեկատվության վարչության և ՀՀ Մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակի հետ համատեղ, միտված էր երաժշտության միջոցով բարձրացնելու մարդու իրավունքների վերաբերյալ իրազեկությունը երիտասարդների շրջանում:

Մարդու իրավունքներ ջատագովները ու իրավապաշտպանները, Երևանի ու ՀՀ մարզերի ՀԿ-ները ներկայացրեցին իրենց գործունեությունը և տարածեցին մարդու իրավունքների մասին տեղեկատվություն: Համերգին մասնակցեցին չորս ռոք խմբեր՝ «Դեղ», «Ան Գորդոնախ», «Որդան Կարմիր» և «Բյութիֆայդ փրոջեքթ»:

Փորձի փոխանակում

Հայկական պատվիրակությունը գրասենյակի աջակցությամբ մասնակցեց Ժնևում տեղի ունեցած Մրցակցային քաղաքականության վերաբերյալ ՄԱԿ-ի համաժողովին

Համաժողովը, որ տեղի ունեցավ նոյեմբերի 8-12-ը Ժնևում, նպատակ ուներ քննարկելու ձեռնարկատիրական գործունեությունը սահմանափակող գործառույթների վերահսկման համաձայնեցված սկզբունքներն ու կանոնները: Համաժողովի ընթացքում քննարկվող հարցերն էին մրցակցության մասին օրենքի ու քաղաքականության մշակումը, միջազգային համագործակցությունը և լավագույն փորձի փոխանակումը, այդ թվում՝ տեխնիկական աջակցության տրամադրումը և շահագրգիռ անդամ պետությունների կարողությունների զարգացումը: ԵԱՀԿ երևանյան գրասենյակը աջակցեց ՀՀ էկոնոմիկայի նախարարի ղեկավարած բարձրաստիճան պատվիրակության մասնակցությանը: Մասնակիցները քննարկեցին մենաշնորհային քաղաքականության խնդիրները և սահմանեցին անհրաժեշտ ազգային ու միջազգային միջոցառումներ, որոնց շնորհիվ հակամրցակցային դրսևորումները չեն խոչընդոտի առևտրի ազատականացման առավելությունները և զարգացող երկրներում ներդրումները: Համաժողովի ընթացքում ներկայացվեց Հայաստանի մրցակցության մասին օրենքի և քաղաքականության վերաբերյալ ԵԱՀԿ գրասենյակի հետ համատեղ Հայաստանի կառավարության նախաձեռնությամբ պատրաստված փորձագետների վերլուծությունը: ԵԱՀԿ գրասենյակի ղեկավար, դեսպան Կապինոսը հանդես եկավ ելույթով, որի ընթացքում ներկայացրեց Հայաստանի մրցակցության քաղաքականության դաշտի ներկա իրավիճակը, զարգացման ուղիներն ու աջակցելու հնարավորությունները:

Քաղաքապետարանի աշխատակազմի ուսուցում

2009թ. Երևանի ավագանու առաջին ընտրություններից հետո կարողությունների հզորացման իր գործունեության շրջանակներում ԵԱՀԿ գրասենյակը ձեռնարկեց Երևանի նորընտիր ավագանու ու քաղաքապետարանի աշխատակազմի մասնագիտական կարողությունների բարձրացման ծրագիրը: Որպես փորձնական ծրագիր գրասենյակը նախաձեռնեց երեք շաբաթյա դասընթաց Երևանի քաղաքապետարանի ու վարչական շրջանների 20 աշխատակիցների համար: Այդ նպատակով գրասենյակը պատվիրեց Նիդեռլանդների հռչակավոր հաստատության՝ Ռոտերդամի քաղաքաշինության և քաղաքային կառավարման ինստիտուտին կատարելու կարիքների համակողմանի գնահատում, որն ուրվագծեց դասընթացների թեմատիկ շրջանակը և թիրախային լսարանը: Այս գնահատման հիման վրա՝ գրասենյակի հետ համատեղ կազմվեցին ուսուցման մոդուլները:

Հոկտեմբեր և նոյեմբեր ամիսներին կազմակերպվեցին ուսուցման երեք մոդուլներ, որոնք անդրադարձան քաղաքային կառավարման ու ռազմավարական պլանավորման, համայնքների տնտեսական զարգացման ու ֆինանսավորման հարցերին՝ ներկայացնելով այլ քաղաքների ժամանակակից մոտեցումներն ու լավագույն փորձը:

«Ամբողջ աշխարհում մեծ քաղաքները կանգնած են մարտահրավերների առջև, որոնք իշխանությունները չեն կարող ինքնուրույն լուծել կամ ֆինանսավորել. մասնավոր հատվածի, ՀԿ-ների և լայն հանրության ներգրավումը պահանջում է ռեսուրսների մոբիլիզացման, մասնակցային ռազմավարական և գործողությունների պլանավորման նոր հմտություններ, իսկ պետական կառույցներից՝ կենտրոնացում արդյունավետության վրա, թափանցիկություն և շփում հանրության հետ», - բացատրեց ինստիտուտի փորձագետ Հանս Թիրլինկը, որը Երևան էր ժամանել կարիքների գնահատման համար:

Ծրագիրը նախատեսվում է շարունակել 2011թ.: Որոշ մասնակիցներ կայցելեն Եվրոպայի քաղաքապետարաններ՝ ուսումնասիրելու լավագույն փորձը:

ԵԱՀԿ աջակցությամբ ստեղծված թրաֆիկինգի դեմ պայքարի աջակցության և ռեսուրս կենտրոնը /ԹՊԱՌԿ/ շարունակում է հզորացնել ազգային կարողությունները

Ամռանը ԹՊԱՌԿ կենտրոնը պետական կառույցների և քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների համար կազմակերպեց ճանաչողական այց Վարշավա և Պրահա զոհերին աջակցելու ոլորտում փոխադարձ համագործակցության հաջողված փորձին ծանոթանալու համար:

Մարդու իրավունքների համատեքստում մարդկանց թրաֆիկինգի երևույթի վերաբերյալ քաղծառայողների շրջանում պատկերացում ձևավորելու, ինչպես նաև Ազգային ուղղորդման մեխանիզմի իրագործումը բարելավելու նպատակով ԹՊԱՌԿ կենտրոնը աջակցել է քաղծառայողների համար թրաֆիկինգի դեմ պայքարի համապարփակ մոդուլ մշակելու հարցում: Քանի որ աշխատանքային թրաֆիկինգը գերակա խնդիր է Հայաստանի համար, աշխատանքային տեսուչների ուսուցումը կլինի հետագա դասընթացների կարևոր մասը:

Մոդուլի վերջնական նախագիծը ներկայացվել է ՀՀ քաղաքացիական ծառայության խորհուրդ, որպեսզի ներառվի քաղաքացիական ծառայողների ուսումնական ծրագրում:

2010 թվականի ընթացքում ԹՊԱՌԿ կենտրոնի մասնագետները ուսուցողական սեմինարներ են անցկացրել իրավապահ մարմինների և սոցիալական ոլորտի աշխատակիցների համար, ինչպես նաև դեկտեմբերին կազմակերպել ազգային ֆորում քննարկելու արդյունավետ համագործակցության և Ազգային ուղղորդման մեխանիզմի իրագործման ուղիները:

Համայնքային ոստիկանությունը ԵԱՀԿ աջակցությամբ ներմուծվելու է Հայաստանի մարզերում

2007-2009 թվականներին գրասենյակը օգնել է ստեղծել համայնքային ոստիկանության փորձնական մոդել Երևանի Արաբկիր համայնքում: Կառավարության կողմից իրականացվող ոստիկանական բարեփոխումների բաղադրիչներից մեկը Արաբկիր համայնքի փորձի հիման վրա համայնքային ոստիկանության ներմուծումն է ամբողջ Հայաստանում: Գրասենյակի աջակցությամբ ստեղծվել է աշխատանքային խումբ համայնքային ոստիկանության ազգային մոդելը և դրա տեղայնացման ռազմավարությունը մշակելու համար:

Ի լրումն այս ջանքերի՝ գրասենյակը իրազեկման նպատակով Հաաստանի մարզերում կազմակերպել է կլոր սեղանների շարք: Այս հանդիպումներն օգնեցին, որպեսզի ոստիկանությունն ու հասարակությունը միասին քննարկեն ժողովրդավարական ոստիկանության ընդհանուր սկզբունքները, դրանց գործնական իրագործումը, միջազգային հաջողված փորձն ու գրասենյակի կողմից իրականացված հետազոտության արդյունքները հատկորոշելու ոստիկանության նկատմամբ հասարակության շրջանում տարածված վերաբերմունքը: Հասարակությունը խրախուսվում է կազմել քաղաքացիների խորհրդատվական խմբեր՝ հատկորոշելու անվտանգության հետ կապված առավել արդիական խնդիրները համապատասխան համայնքներում և հետագայում քննարկելու դրանք ոստիկանների հետ: Այս նախաձեռնությունն օգնում է հասարակությանն ու ոստիկանությանը իրար հետ մոտեցնելուն, ինչպես նաև ցույց է տալիս այս աշխատանքի առավելությունները:

Համագործակցություն Ազգային Ժողովի հետ

Գրասենյակը ԵԱՀԿ խորհրդարանական վեհաժողովի և Համբուրգում ԵԱՀԿ հետազոտությունների կենտրոնի հետ համատեղ կազմակերպեց հետազոտական աշխատանքների մրցույթ խորհրդարանի փորձագիտական անձնակազմի շրջանում: Աշխատակազմի 14 ներկայացուցիչներ մասնակցեցին և ներկայացրեցին համեմատական վերլուծություններ մի շարք խնդիրների շուրջ, այդ թվում՝ կոռուպցիոն ռիսկերի վերլուծություն, քաղաքական փոքրամասնությունների պաշտպանություն, սոցիալական ապահովում և խորհրդարանական էթիկա: Հոկտեմբերին Ազգային ժողովում հանդիսավոր արարողության ժամանակ հայտարարվեցին և պարգևատրվեցին մրցույթի հաղթողները:

Ազգային ժողովի աշխատակիցների միջազգային փորձը և միջխորհրդարանական փոխանակումը խթանելու նպատակով գրասենյակը մի խումբ աշխատակիցների համար նոյեմբերին կազմակերպեց ճանաչողական այց Սլովենիա: Լյուբլյանայում նրանք առիթ ունեցան ծանոթանալու խորհրդարանական աշխատանքի կազմակերպմանը Սլովենիայում, ինչպես նաև ուսումնասիրելու հանձնաժողովների գործնական աշխատանքները և անհրաժեշտ հմտությունները:

ԵԱՀԿ գրասենյակը աջակցել է ՀՀ պաշտպանության նախարարության կարգապահական մեկուսարաններում և կարգապահական գումարտակում հանրային դիտորդում անցկացնելուն

Հուլիսի 20-ին կազմակերպված քննարկումը նվիրված էր *«Քաղաքացիական հասարակություն ինստիտուտ»* հասարակական կազմակերպության կատարած ուսումնասիրության արդյունքներին: Քննարկմանը մասնակցում էին ՀՀ պաշտպանության նախարարության, Ազգային ժողովի, քաղաքացիական հասարակության և միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչներ: 2009 թվականի ընթացքում դիտորդական խումբը այցելել է բոլոր կարգապահական մեկուսարաններն ու կարգապահական գումարտակը և ուսումնասիրել ազատությունից զրկված անձանց պայմանները և նրանց հանդեպ վարվելակերպը: Խումբը նաև ուսումնասիրել է համապատասխան օրենսդրությունը և առաջարկել մի շարք բարեփոխումներ:

Մասնավորապես, զեկույցում առաջարկվում է պահման պայմանները համապատասխանեցնել ՄԱԿ-ի բանտարկյալների հետ վարվեցողության նվազագույն ստանդարտ կանոններին և եվրոպական բանտային կանոնների հետ, ինչպես նաև փոփոխել օրենսդրությունը՝ ապահովելու կարգապահական գումարտակում պահվող անձանց մոտ երկարատև այցերի հնարավորություն: Մանրամասնորեն քննարկվում է նաև մեկուսացումը որպես կարգապահական տույժ կիրառելու պրակտիկան:

Հաշվետվության հրատարակումը իրականացվել է ԵԱՀԿ երևանյան գրասենյակի աջակցությամբ՝ ազատազրկված անձանց և զինված ուժերի անձնակազմի իրավունքները պաշտպանելու նպատակով:

ԵԱՀԿ 3 հիմնարար փաստաթղթերի հոբելյանական հրատարակություն

2010թ. հոբելյանական տարում ԵԱՀԿ երևանյան գրասենյակի և ՀՀ արտաքին գործերի նախարարության համատեղ ջանքերով պատրաստվեց և հրատարակվեց ԵԱՀԿ 3 հիմնարար փաստաթղթերի՝ 1975թ. Հելսինկյան եզրափակիչ ակտի, 1990 թ. Նոր Եվրոպայի համար փարիզյան խարտիայի և 1990թ. Կոպենհագենյան հանդիպման փաստաթղթի հայերեն պաշտոնական թարգմանությունը:

ՀՀ բուհական համակարգում կոռուպցիայի ընկալման վերաբերյալ ուսումնասիրություն

Գրասենյակը աջակցեց Երևանի և Գյումրիի ուսանողների շրջանում կոռուպցիայի ընկալման վերաբերյալ ուսումնասիրության անցկացմանը: Որպես կոռուպցիայի դեմ ուսանողների պայքարի մի բաղադրիչ՝ ուսումնասիրությունը նպատակ ունի խրախուսելու ընդհանուր խնդիրների շուրջ քննարկումը և քաջալերելու ուսանողներին պաշտպանել իրենց իրավունքներն ու համալսարաններում խթանելու թափանցիկությունը:

Նոտարական ծառայությունների բարելավման ու կոռուպցիոն ռիսկերի հաղթահարման վերաբերյալ ուսումնասիրություն

Գրասենյակի աջակցությամբ *«Հայաստանի երիտասարդ իրավաբանների ասոցիացիա»* ՀԿ-ի կողմից պատրաստված զեկույցը վերլուծում է կանոնակարգիչ դաշտն ու գործելաոճը և անդրադառնում քաղաքացիների՝ ընթացակարգերին, վճարներին և նոտարների արհեստավարժությանն առնչվող մտահոգություններին: Առաջարկություններն ուղղված են խթանելու նոտարների գործունեության թափանցիկությունն ու նրանց նկատմամբ հանրային վերահսկողությունը:

Աջակցություն ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակին

Գրասենյակը աջակցել է Մարդու իրավունքների պաշտպանի տարեկան զեկույցի և ՄԱԿ-ի Խոշտանգումների դեմ կոնվենցիայի կամընտիր արձանագրության Ազգային կանխարգելիչ մեխանիզմի մասին զեկույցի հրատարակմանը: Գրասենյակի աջակցությամբ իրականացվել է նաև ազգային փոքրամասնությունների նկատմամբ կիրառվող պետական քաղաքականության գնահատում, որի նպատակն էր բարձրացնել Մարդու իրավունքների պաշտպանի հաստատության կարողությունները՝ նրանց իրավունքների արդյունավետ պաշտպանության համար:

Հայաստանում արդյունավետ մաքսային համակարգի խթանում

Դեկտեմբերի 10-ին գրասենյակը Հայաստանի *«Մաքսային բրոքերների ասոցիացիայի»* հետ համատեղ ներկայացրեց կարիքների գնահատման ուսումնասիրության արդյունքները, որտեղ վերլուծվել էր մաքսային ռեժիմի գոյություն ունեցող պրակտիկան և ուսումնասիրվել էր մաքսային գործակալների հմտությունների զարգացման ուղիները, պետական մարմինների, մաքսային կազմակերպությունների և գործարար հանրության միջև համագործակցությունը խթանելու եղանակները: Միաժամանակ տեղի ունեցավ *մաքսային ասոցիացիայի* կայքէջի շնորհանդեսը, որը գիտելիք և խորհրդատվության առցանց հարթակ կհանդիսանա՝ ապահովելով գործարարներին և մաքսային ծառայությունների հետ առնչվող շարքային քաղաքացիներին ժամանակին տրամադրվող հավաստի տեղեկություն: Մաքսային ծառայությունների կառավարման արդյունավետության և հաշվետվողականության բարձրացումը կառավարության 2009-2012 հակակոռուպցիոն ռազմավարության կարևորագույն մասն է կազմում:

Միջոցառումներ/հայտարարություններ

Նա/Նե լրագրողական աշխատանքների ամենամյա մրցույթ

ԵԱՀԿ գրասենյակը, Բրիտանական դեսպանատան և Բրիտանական խորհրդի հետ համատեղ հայտարարել է Նա/Նե լրագրողական աշխատանքների ամենամյա մրցույթ, որը կարևորում և պարգևատրում է գենդերային հավասարության հարցում ներդրում ունեցող լրագրողներին: Տպագիր և էլեկտրոնային լրատվամիջոցների, ինչպես նաև հեռուստատեսության և ռադիոյի լրագրողներին առաջարկվում է ներկայացնել իրենց հոդվածները, որոնք անդրադառնում են քաղաքական, տնտեսական և սոցիալական ոլորտներում կանանց գործունեությանն ու նվաճումներին: Նյութերը պետք է տպագրված կամ հեռարձակված լինեն 2010 հունվարից դեկտեմբեր ընկած ժամանակահատվածում: Մրցույթի հաղթողները կհայտարարվեն և կպարգևատրվեն 2011թ. հունվարին:

ԵԱՀԿ-ի մասին

Եվրոպայում անվտանգության և համագործակցության կազմակերպությունը՝ ԵԱՀԿ-ն գործում է հանուն 56 պետությունների կայունության, բարօրության և ժողովրդավարության՝ համընդհանուր արժեքների շուրջ քաղաքական երկխոսության և գործնական աշխատանքների միջոցով՝ հետամուտ բարելավմանը:

ԵԱՀԿ երևանյան գրասենյակը հիմնադրվել է 2000թ.-ին օժանդակելու Հայաստանին ԵԱՀԿ առջև ստանձնած պարտավորությունների կատարմանը բոլոր երեք՝ ռազմաքաղաքական, տնտեսական և բնապահպանական և մարդու իրավունքների ուղղություններով: Հավելյալ տեղեկությունների համար դիմել ԵԱՀԿ երևանյան գրասենյակ՝

Սունդուկյան 64/1 հեռ. 22 96 10/11/12 էլ. փոստ՝ yerevan-am@osce.org, կայք էջ՝ www.osce.org/yerevan